



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԵՏՈՒԹՅԱՆ,  
ՄՇԱԿՈՒՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԵԿԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ԱՐՅԱՆԻ ԵՐԻՏԱՎԱՐԻ  
ԳԵՏՆԵԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ  
ՄԵԿՆՈՐՈՒԹՅՈՒՆ (ԱԵԿՄԹ)



ԵՐԵՎԱՆԻ  
ԳԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍՏՐԱՆ



«ՉԱՆԳԵՉՈՒԹՅՈՒՆ»  
ԳՆԱԶԱՐՄԱՆ ԲԵՆԵՎՈՅԻՆ  
ԿՈՄՔԻՆԱՏ» ՓԲԸ



# ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱՆ



**SCIENTIFIC  
ARTSAKH**

**НАУЧНЫЙ  
АРЦАХ**

**№ 2(3), 2019**

Հիմնադիր – Founder – Учредитель:  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)  
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)  
[www.ysu.am](http://www.ysu.am)

Հրատարակիչ – Publisher - Издатель:  
ԱՐՅԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱԿՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)  
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)  
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)  
[www.aegmm.org](http://www.aegmm.org)

**ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱԽ**  
**SCIENTIFIC ARTSAKH**  
**НАУЧНЫЙ АРЦАХ**

**№ 2(3), 2019**

*«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:*

*The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).*

*Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).*

ԱԵԳՄՍ – UYSSA – ОМУСА  
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН  
2019

*Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ*

*Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը*

**Նվիրվում է Երևանի պետական համալսարանի  
հիմնադրման 100-ամյակին**

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Նախագահ՝ Արամ ՄԻՍՈՆՅԱՆ**, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ  
**Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեմինա ՍԱՐՈՒԹՅԱՆ**, բանասիրական գիտությունների թեկնածու,  
դոցենտ

**Անդամներ՝**

**Արծրուն ԱՎԱԳՅԱՆ**, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
**Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ**, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
**Դավիթ ԲԱԲԱՅԱՆ**, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ  
**Վահրամ ԲԱՆԱՅԱՆ**, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
**Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ**, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ  
**Ջուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ**, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
**Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ**, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Կոստրոմա, ՌԴ)  
**Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ**, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
**Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ  
**Մարել ԺԵՅՄՈ**, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Օլշտին, Լեհաստան)  
**Վալենտինա ԼԱՊԵՎԱ**, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Մոսկվա, ՌԴ)  
**Օտտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆԴՏ**, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Համբուրգ, Գերմանիա)  
**Ռուզաննա ՀԱՎՈՐՅԱՆ**, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ  
**Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
**Մուշեղ ՀՈՎՍԵՓՅԱՆ**, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
**Գագիկ ԴԱԶԻՆՅԱՆ**, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
**Աշոտ ՍԱՐԿՈՍՅԱՆ**, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ**, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
**Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ**, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
**Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ**, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Յուրի ՍՈՒԿԱՐՅԱՆ**, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Մաքսիմ ՎԱՍԿՈՎ**, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Դոնի Ռոստով, ՌԴ)  
**Գարիկ ԶԵՌՅԱՆ**, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
**Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ**, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Գիտական Արցախ, № 2(3), 2019, Երևան, ԱԵԳՄՄ հրատ., 2019, 472 էջ:**

«Գիտական Արցախ» պարբերականի 2019թ. 2-րդ համարում տեղ են գտել հասարակական գիտությունների արդի հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը, Գերմանիան, Իրանի Իսլամական Հանրապետությունը, Լեհաստանը, Հարավային Օսեթիան, Ռուսաստանի Դաշնությունը և Ուկրաինան ներկայացնող մոտ հինգ տասնյակ անվանի ու երիտասարդ գիտնականների աշխատանքները:

Գիտական պարբերականում զետեղված են նաև Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման ու Երևանի պետական համալսարանի կողմից 2019թ. սեպտեմբերի 12-15-ը Ստեփանակերտում համատեղ կազմակերպված «Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» միջազգային երիտասարդական 4-րդ գիտաժողովի լավագույն գիտական հոդվածները:

*Dedicated to the 100th Anniversary  
of Yerevan State University*

## **EDITORIAL COUNCIL**

**Chairman:** Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

**Editor-in-Chief:** Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

**Deputy Editor-in-Chief:** Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

### **Members:**

Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor

Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor

David BABAYAN, Doctor of History, Associate Professor

Vahram BALAYAN, Doctor of History, Professor

Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor

Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Associate Professor

Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor

Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)

Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor

Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Moushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor

Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor

Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor

Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)

Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)

Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Edik MINASYAN, Doctor of History, Professor

Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor

Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor

Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)

Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Associate Professor

Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

**Scientific Artsakh, № 2(3), 2019, Yerevan, UYSSA publ., 2019, 472 pages.**

The second issue of «Scientific Artsakh» journal 2019 comprises the scientific works of approximately 50 prominent and young scientists from Armenia, Artsakh, Germany, Islamic Republic of Iran, Poland, South Ossetia, Russia and Ukraine on the topical issues of social sciences.

The publication also contains the best scientific articles of the 4th international youth scientific conference «The past, present and future of the Armenian statehood», jointly organized by the Union of Young Scientists and Specialists of Artsakh and Yerevan State University on September 12-15, 2019 in Stepanakert

*Издается решением учёного совета Ереванского государственного университета*

*Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»*

*Посвящается 100-летию основания  
Ереванского государственного университета*

## РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

**Председатель:** Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

**Главный редактор:** Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

**Заместитель главного редактора:** Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

### **Члены:**

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор

Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор

Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент

Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор

Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент

Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор

Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)

Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, доцент

Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)

Джультетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор

Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор

Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, доцент

Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)

Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор

Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор

Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор

Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)

Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)

Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор

Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор

Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент

Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор

Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор

Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

**Научный Арцах, № 2(3), 2019, Ереван, Изд. ОМУСА, 2019, 472 страниц.**

В втором номере 2019 г. журнала «Научный Арцах» нашли место научные работы выдающихся и молодых ученых из Армении, Арцаха, Германии, Исламской Республики Иран, Польши, Южной Осетии, России и Украины, исследующие актуальные вопросы общественных наук.

В издании размещены также лучшие научные статьи 4-ой международной молодежной научной конференции «Прошлое, настоящее и будущее Армянской государственности», совместно организованной Объединением молодых учёных и специалистов Арцаха и Ереванским государственным университетом 12-15 сентября 2019 года в Степанакерте.

***SՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА***

- Արման Ասրյան.** Համատիրությունների գործունեության խոչընդոտները և դրանց հաղթահարման ուղիները ՀՀ-ում..... 148  
**Arman Asryan.** The Barriers to the Operation of Condominiums and the Ways to Overcome them in the RA  
**Арман Асрян.** Препятствия деятельности кондоминиумов и пути их преодоления в РА
- Մարինե Ավետիսյան.** Բանկային ճգնաժամերը պայմանավորող գործոնների համեմատական վերլուծություն հայաստանի և Արցախի տնտեսությունների համար..... 163  
**Marine Avetisyan.** Comparative Analysis of the Factors of Banking Crises for the Economies of Armenia and Artsakh  
**Марине Аветисян.** Сравнительный анализ факторов банковского кризиса для экономики Армении и Арцаха
- Նադեժդա Աֆյան.** Հայաստանի հանքավայրերի շահագործման շահագրգիռ կողմերի հակասությունները..... 176  
**Nadezdha Afyan.** Conflicts of Stakeholders of Armenian Mining  
**Надежда Афян.** Противоречия заинтересованных сторон по эксплуатации месторождений армении
- Ճաննա Բազիյան.** Տեխնոպարկերի ստեղծումը՝ որպես գիտելիքահեղեղ տնտեսության զարգացման գործիք. օտարերկրյա փորձը և դասեր Հայաստանի համար..... 184  
**Zhanna Baziyan.** Formation of Technoparks as an Instrument of Development of the Knowledge Economy: Foreign Experience and Lessons for Armenia  
**Жанна Базиян.** Создание технопарков как инструмент развития экономики знаний: зарубежный опыт и уроки для Армении
- Տիգրան Բեգլարյան.** ՀՀ սոցիալական հիփոթեքի, բնակարանաշինության և հիփոթեքային շուկայի ֆինանսական խթանման միջոցները ՀՀ-ում..... 193  
**Tigran Beglaryan.** Financial Measures of State Incentives for Social Mortgage, Housing Construction and Mortgage Market in RA  
**Тигран Бегларян.** Финансовые меры государственного стимулирования социальной ипотеки, жилищного строительства и ипотечного рынка в РА
- Սամսոն Դավոյան, Լուսյա Գալոյան.** Երկրների իրականացրած բազմաբնույթ վերափոխումների ընդհանրական գնահատումը. փաստեր և վերլուծություններ..... 204  
**Samson Davoyan, Lusya Galoyan.** Intergral Assessment of Various Reforms Implemented in Countries: Facts and Analysis  
**Самсон Давоян, Люся Галоян.** Всеобщая оценка разнородных преобразований, осуществленных странами: факты и анализы
- Հայկարամ Դրմեյան.** Հայաստանի և Արցախի Հանրապետությունների համայնքների զարգացման հիմնախնդիրներն ու մարտահրավերները..... 219  
**Haykaram Drmeyan.** Problems and Challenges of Community Development in Armenia and Artsakh  
**Айкаррам Дрмеян.** Проблемы и вызовы развития общин в Армении и Арцахе

**ԵՐԿՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ  
ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.  
ՓԱՍՏԵՐ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ\***

**ՍԱՄՍՈՆ ԴՎՎՈՅԱՆ**

*ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում մագիստրոսական  
ծրագրի ղեկավար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
թ.Երևան, Հայաստանի Հանրապետություն  
samsondavoyan2014@gmail.com*

**ԼՈՒՍՅԱ ԳԱԼՈՅԱՆ**

*ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության  
ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու,  
թ. Գյումրի, Հայաստանի Հանրապետություն  
lusya.galoyan@gmail.com*

*Հոդվածի նպատակն է մեր կողմից մշակված մեթոդաբանության հիման վրա  
քսան մասնակի համաթվերի միջոցով ձևավորել վերափոխումների ընդհանրական  
համաթիվ, որի միջոցով 2012-2017թթ.-ի համար 66 երկրներում<sup>353</sup> իրականացված  
բազմաբնույթ վերափոխումների մակարդակով կատարել գնահատում և  
համեմատական արդյունավետության վերլուծություն:*

*Հոդվածում ներկայացվել է վերափոխումների ընդհանրական համաթվի  
ձևավորման մեթոդաբանությունը և արդյունքներն ըստ գլխավոր բաղադրիչի  
մեթոդի, այնուհետև գնահատվել են ձևավորված վերափոխումների ընդհանրական  
համաթվի փոփոխության մեջ յուրաքանչյուր առանձին մասնակի համաթվի  
նպաստումները: Հետապոտության վերջին փուլում կլաստերային վերլուծության  
գործիքակազմի կիրառմամբ իրականացվել է երկրների խմբավորում ըստ  
վերափոխումների ընդհանրական համաթվի: Իրականացված գնահատումներն ու  
վերլուծություններն առավել ակնառու դարձնելու համար մեկնաբանվել են  
կլաստերների մեջ ներառված առանձին երկրների (կլաստերի խմբում  
առավելագույն, նվազագույն ու միջին արժեքներ արձանագրած) գնահատումները:*

*Իրականացված վերլուծությունները վկայում են, որ վերլուծության  
ենթարկված երկրների իշխանությունները և հանրությունը իրենց երկրի  
վերափոխումների բազմաբնույթ ծրագրերը մշակելու և իրականացնելու  
ընթացքում գիտական հիմնավորվածության և գործնական նշանակության  
տեսանկյունից պետք է առավել հետևողական լինեն և կարողանան բարձրացնել  
վերոնշյալ վերափոխումների (որոնք սահմանափակում են երկրի սոցիալ-  
տնտեսական զարգացումը) համեմատական արդյունավետությունը: Իսկ  
զարգացմանը նպաստող վերափոխումները առնվազն պետք է իրականացվեն ոչ  
պակաս աճի տեմպերով, քան իրականացվել են հաշվետու  
ժամանակահատվածում:*

*Հիմնաբառեր՝ վերափոխում, գլխավոր բաղադրիչ, պանելային տվյալների  
վերլուծություն, կլաստերային վերլուծություն, համեմատական արդյունավետություն,  
համաթիվ, նպաստում:*

\* Հոդվածը ներկայացվել է 24.09.2019թ., գրախոսվել՝ 01.11.2019թ., տպագրության  
ընդունվել՝ 12.12.2019թ.:

<sup>353</sup> Երկրների ընտրության համար հաշվի է առնվել այն հանգամանքը, թե արդյոք առկա է  
տեղեկատվություն հաշվարկներում ընդգրկված բոլոր համաթվերի կտրվածքով:

Համաշխարհային տնտեսության բազմաբնույթ փոփոխությունները լուրջ մարտահրավերներ են ներկայացնում տարբեր երկրների իշխանություններին ու հասարակությանը: Դրանք հաղթահարելու նպատակով նրանք մշակում ու իրականացնում են տարաբնույթ ծրագրեր, որոնց իրականացումը սովորաբար ուղղորդվում է բազմաբնույթ վերափոխումների մշակմամբ և գործնական կիրառմամբ: Յուրաքանչյուր երկրի համար կարևոր խնդիր է հանդիսանում այն, թե ինչ համեմատական արդյունավետությամբ են մշակում ու իրականացնում համապատասխան վերափոխումները զարգացման համարյա նույն մակարդակում գտնվող երկրները: Ինչպես միջազգային, այնպես էլ ոչ կառավարական կազմակերպությունների կողմից մշակվում են բազմաթիվ համաթվեր, որոնք ներկայացնում են տարբեր երկրներում իրականացված վերափոխումների առանձին ուղղությունները: Առաջարկվող հոդվածի հիմնական գաղափարն է միավորել աշխարհի շուրջ 66 երկրներում իրականացված տարաբնույթ վերափոխումներն արտահայտող վերոնշյալ համաթվերը մեկ ընդհանուր համաթվում, որն իր կազմի մեջ մտնող մասնակի համաթվերի շրջանակներում կարտահայտի ընդհանուր վերափոխումների քանակական մեծությունը:

Մեր առջև դրված նպատակին հասնելու համար կատարվել է հետևյալ ենթադրությունը, որ բոլոր բազմաբնույթ վերափոխումների արդյունքները որոշակի ճշգրտությամբ արտահայտվում են ինչպես տարբեր միջազգային, այնպես էլ ոչ պետական կազմակերպությունների կողմից մշակվող համաթվերում:

Քանի որ հաշվետու ժամանակահատվածի համար (2012-2018թթ.) ինչպես միջազգային, այնպես էլ հանրապետական տեղեկատվական բազաներից հնարավոր չէր ստանալ և վերամշակել ավելի տարողունակ տվյալների բազա, առանձնացրել ենք հետևյալ 25 մասնակի համաթվերը<sup>354</sup>, որոնցից 20-ը բավարարում են մեր կողմից առաջադրված պահանջներին, և վերջիններիս հիման վրա էլ ձևավորել ենք վերափոխումների ընդհանրական համաթվի տեղեկատվական շտեմարանը:

Առաջադրված նպատակին հասնելու համար նախ մեր կողմից հավաքագրվել ու մշակվել է վերոնշյալ մասնակի համաթվերի 2012-2018/19թթ. վիճակագրական տվյալների միասնական շտեմարանը:

***Շտեմարանի ձևավորման ու մշակման աշխատանքները կատարվել են քայլերի հետևյալ հաջորդականությամբ.***

1. *Յուրաքանչյուր համաթվի համար իրականացվել է ժամանակային շարքի կառուցում:*
2. *Իրականացվել է 25 համաթվերի համար կառուցված ժամանակային շարքերի խմբավորում ըստ երկրների, որի արդյունքում կառուցվել է մեկ ինֆորմացիոն մատրից (Երկիր-ինդեքս 1, ինդեքս 2 և այլն, 2012-2018 ժամանակահատվածի համար):*
3. *Տարբեր վիճակագրական եղանակներով իրականացվել է բաց թողնված տեղեկատվության մոտարկում և գնահատում:*

<sup>354</sup> Շրջագայությունների և զբոսաշրջության մրցունակության, Շրջակա միջավայրի պահպանության, Ցանցային պատրաստվածության, Գենդերային անհավասարության, Կոռուպցիայի ընկալման, Տնտեսական ազատության, Ժողովրդավարության, Գործարար ակտիվության, Համաշխարհային խաղաղասիրության, Փողերի վլացման, ահաբեկչության ֆինանսավորման ոլորտում երկրի ռիսկայնության մակարդակի, Միջազգային առևտրում ներգրավվածության, Բարգավաճման, Սոցիալական առաջընթացի, Մարդկային զարգացման, Համաշխարհային Նորարարական, Մարդկային կապիտալի, Վերափոխումների, Լոգիստիկայի արդյունավետության, Համաշխարհայինացման, Համաշխարհային ձեռնարկատիրության, Մամուլի ազատության, Սեփականության միջազգային իրավունքի պաշտպանության, Տաղանդների համաշխարհային մրցունակության, Պետության խոցելիության:



4. *Վերջում տվյալների մշակումը ավարտվել է վերջիններիս հարմոնիզացիայով կամ նորմավորմամբ:*

Այնուհետև տվյալների վերամշակումից հետո ստատիկ գլխավոր բաղադրատարրերի գնահատման մեթոդի հիման վրա գնահատվել են գլխավոր բաղադրատարրերը: Ընդ որում, դրանց գնահատումը կատարվել է ըստ Սթոքի և Ուոթսոնի (Stock and Watson 2002a and 2002b) ստատիկ գլխավոր բաղադրատարրերի եղանակի: Վերջում ընդհանրական համաթիվը կառուցվել է որպես օգտագործված ցուցանիշների հիման վրա կառուցված գլխավոր բաղադրատարրերի միջին կշռված գումար: Համընդհանուր համաթիվ կառուցման համար օգտագործվել է գլխավոր բաղադրատարրերի եղանակով գնահատված առաջին 5 բաղադրատարրերը: Որպես կշիռներ օգտագործվել են յուրաքանչյուր գլխավոր բաղադրատարրի վարիացիայի տեսակարար կշիռը 5 գլխավոր բաղադրատարրերի վարիացիաների հանրագումարի մեջ (գնահատումների արդյունքները 2017թ.-ի համար ներկայացված են գծապատկեր 1-ում):


Կայգեր-Մեյեր-Օլկին (KMO) թեստը, որը ստուգում է օգտագործված ցուցանիշների համապատասխանությունը գլխավոր բաղադրատարրերի եղանակով գնահատված գործոնային վերլուծությանը, վկայում է մեր օգտագործած ցուցանիշների համապատասխանության բարձր աստիճանի մասին: Մասնավորապես, KMO թեստի արժեքը՝ թույլատրելի 0-1 միջակայքից, մեր կողմից իրականացված վերլուծության համար կազմել է բավականին բարձր՝ 0.94:

*Կառուցված համընդհանուր համաթիվն յուրաքանչյուր օգտագործված համաթիվի նպաստումը գնահատելու համար իրականացվել է պանելային տվյալների վերլուծություն՝ օգտագործելով 66 երկրի տնտեսական զարգացումը բազմակողմանի բնութագրող համաթիվերը 2012-2017թթ.-ի համար (առանձին երկրների օրինակով ներկայացված է ստորև՝ կլաստերային խմբերում ներառված երկրների վերլուծությունների հատվածում):*

Վերլուծության վերջին փուլի իրականացման նպատակը տարբեր երկրների վերափոխումների բարելավմանը նպատակամղված վերափոխումների ընթացքն ու արդյունքները բնութագրող ցուցանիշների (համաթիվերի) ընդհանրացումն է՝ կլաստերային վերլուծության գործիքակազմի կիրառմամբ:

Հետազոտության շրջանակներում կլաստերային վերլուծության մեթոդների կիրառմամբ խմբավորվել են 66 երկրներ:

Կլաստերային վերլուծությունն իրականացվել է “Python” փաթեթի գործադրմամբ: Օգտագործվել է կլաստերացման k-միջինների մեթոդը: Դրա ավգորիթը հիմնված է ներկլաստերային դիսպերսիայի մինիմիզացման սկզբունքի վրա: Մեթոդի կիրառման համար անհրաժեշտ է նախապես հստակեցնել կլաստերների պահանջվող թիվը (այս թիվն ընտրվում է կամայականորեն, որոշակի նախնական դիտարկումների հիման վրա, կամ էլ կարելի է հիմնվել ազլումերատիվ կլաստերացման արդյունքների վրա): Կլաստերների նախնական թվին համապատասխան օբյեկտների տարածությունում պատահականորեն նշանակվում են ապագա կլաստերների սկզբնական կենտրոնները, այնուհետև հաշվարկվում են կլաստերների կենտրոնների և յուրաքանչյուր օբյեկտի միջև հեռավորությունները, և օբյեկտը դասվում է այն կլաստերին, որին այն առավել մոտ է գտնվում: Ավարտելով կլաստերների ձևավորումը՝ հաշվարկվում է յուրաքանչյուր կլաստերի միջինը: Միջինների հավաքածուն իրենից ներկայացնում է կլաստերի կենտրոնի նոր դիրք:



Հաշվարկվում են նոր կենտրոններից բոլոր օբյեկտների հեռավորությունները, և դրանց առավել մոտ գտնվող օբյեկտները վերագրվում են տվյալ կլաստերին: Հաշվարկվում են նոր կլաստերների կենտրոնները, և ընթացակարգը շարունակվում է այնքան, մինչև հերթական կլաստերների կենտրոնները մնան անփոփոխ:

Ուսումնասիրված երկրների կլաստերային դասակարգումը ցույց է տալիս, որ առկա են միմյանցից տարբեր փոփոխման դինամիկա ունեցող ժամանակահատ-

<sup>355</sup> Հաշվարկները կատարվել են հեղինակների կողմից STATA14 ծրագրային փաթեթի միջոցով:

վածներ՝ 2012-2013 թվականներ, երբ համաթվի էական փոփոխություն չի արձանագրվել երկրների մեծամասնությունում և 2014-2017 թվականներ, երբ արձանագրվել է համաթվի էական բարելավումներ երկրների մեծամասնության շրջանում:

Երկրների խմբավորումն ըստ վերափոխումների ընդհանրական համաթվի մեծության ցույց է տալիս, որ դասակարգման առաջին մակարդակում առկա են երկրների 2 խումբ, երկրների դասակարգման 2-րդ մակարդակում ունենք երկրների 4, իսկ 3-րդ մակարդակում՝ 8 խումբ և այլն:

Առավել մանրամասն ներկայացնենք 2-րդ մակարդակում ձևավորված երկրների խմբերը: Մասնավորապես, երկրների առաջին խմբում, որտեղ վերափոխումների ընդհանրական համաթիվը ամենաբարձրն է, ներառված են 17 զարգացած երկրներ՝ Պորտուգալիա, Իսպանիա, Ֆրանսիա, Ճապոնիա, Նորվեգիա, Ֆինլանդիա, Շվեյցարիա, Կանադա, Ավստրալիա, Անգլիա, Գերմանիա, Իռլանդիա, Իսլանդիա, Յուլանդիա, ԱՄՆ, Ավստրիա և Բելգիա: Այս խմբում 2012-2017 ժամանակահատվածում համաթվի միջինը կազմել է 8.7, և խմբում ընդգրկված երկրների համաթվերը տատանվում են 6.6-10 միջակայքում:

Երկրորդ խմբում ներառված երկրները 15-ն են՝ Կիպրոս, Յունգարիա, Լեհաստան, Չիլի, Իտալիա, Լատվիա, ԱՄԷ, Ռիուդեյվոյ, Խորվաթիա, Մալդիվա, Բուլղարիա, Կոստա Ռիկա, Պանամա, Յունաստան ու Ռումինիա: Այս խմբում 2012-2017 ժամանակահատվածում համաթվի միջինը կազմել է 5.8, և խմբում ընդգրկված երկրների համաթվերը տատանվում են 4.6-7 միջակայքում:

Երրորդ խմբում ներառված երկրները 26-ն են՝ Հնդկոստան, Ղրղզստան, Գվատեմալա, Պարագվայ, Հնդկաստան, Մարոկո, Ադրբեջան, Վիետնամ, Չինաստան, Ղազախստան, Ֆիլիպիններ, Ռեյրախիս, Հորդանան, Ինդոնեզիա, Ռուսաստան, Վրաստան, Մեքսիկա, Պերու, Մոլդովա, Թուրքիա, Արգենտինա, Բոթսվանա, Բրազիլիա, Ալբանիա, Հայաստան ու Զոնյվեթ: Այս խմբում 2012-2017 ժամանակահատվածում համաթվի միջինը կազմել է 3.4, և խմբում ընդգրկված երկրների համաթվերը տատանվում են 2-4.6 միջակայքում:

Չորրորդ խմբում ներառված երկրներն ընդամենը 8-ն են՝ Պակիստան, Զենիա, Ալժիր, Սենեգալ, Վենեսուելա, Բանգլադեշ, Կամբոջիա և Իրան: Այս խմբում 2012-2017 ժամանակահատվածում համաթվի միջինը կազմել է 1.2, և խմբում ընդգրկված երկրների համաթվերը տատանվում են 0-2.1 միջակայքում:

*Իրականացված գնահատումներն ու վերլուծություններն առավել ակնառու դարձնելու համար մեկնաբանենք կլաստերների մեջ ներառված առանձին երկրների (կլաստերի խմբում առավելագույն, նվազագույն ու միջին արժեքներ արձանագրած) գնահատումները<sup>356</sup>:*

**Ֆինլանդիա (1-ին կլաստեր):** Ֆինլանդիայի տնտեսության համար գնահատված նոր համաթիվը, որը տատանվում է 0-10 միջակայքում, 2012-2017 թթ. ժամանակահատվածում փոփոխվել է 0.5 միավորով, **2012 թվականի 9.4-ի փոխարեն 2017 թվականին կազմել է ընդամենը 9.9:** Չնայած դրան՝ դիտարկված ժամանակահատվածի ընթացքում գնահատված վերափոխումների ընդհանրական համաթիվը 2012-2016 թթ.-ին դրսևորել է աճի միտում՝ աճելով 0.6 վարկանիշային միավորով, իսկ 2017 թ.-ին՝ նվազել 0.1 վարկանիշային միավորով:

Արդյունքում ընդամենը **0.5 միավորով համաթվի բարելավումը** հիմնականում պայմանավորվել է նշված ժամանակահատվածում Ֆինլանդիայում բնապահպանության արդյունավետության (EPI), համաշխարհային ձեռներեցության (GEI), փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (Basel AML) ոլորտներում

<sup>356</sup> Ստորև ներկայացված բոլոր աղյուսակների ու գծապատկերների տվյալները հեղինակների հաշվարկների արդյունքներն են:

տեղի ունեցած բարեփոխումներով, որն ամբողջությամբ չեզոքացրել է գեոէրային անհավասարության (GGGI) և շրջագայությունների ու զբոսաշրջության մրցունակության (TTCI) ոլորտի բացասական զարգացումները (տե՛ս աղյուսակ 1):

<b>Աղյուսակ 1.</b>																			
<b>Ֆինլանդիայի համաթվի փոփոխությանը նպաստող ենթահամաթվերը 2012-2017 ժամանակահատվածում</b>																			
Basel	EPI	GEI	GTCI	CPI	EF	HDI	LPI_L	SPI	FSI	DI	GCI	FOTP	LPI	DB	HCI	GII	GPI	GGGI	TTCI
0,29	0,26	0,21	0,05	0,04	0,03	0,02	0,02	0,01	0,01	0	-0,01	-0,01	-0,02	-0,03	-0,04	-0,05	-0,05	-0,06	-0,13

Համաթվի փոփոխության պատճառով Ֆինլանդիան դիտարկված 66 երկրների կազմում 1 տեղով բարելավել է իր դիրքը՝ 2012թ.-ի 2-րդ տեղի փոխարեն 2017թ.-ին զբաղեցնելով 1-ին տեղը (տե՛ս աղյուսակ 2.):

<b>Աղյուսակ 2.</b>		
<b>Ֆինլանդիա: Համաթվի դինամիկան ըստ տարիների</b>		
Տարիներ	Երկրի տեղը 66 երկրների շարքում	Վարկանիշային միավորը (0-10)
2012	2	9,4
2013	2	9,5
2014	1	9,9
2015	1	10,0
2016	1	10,0
2017	1	9,9

**Կանադա (1-ին կլաստեր):** Կանադայի տնտեսության համար գնահատված նոր համաթիվը, որը տատանվում է 0-10 միջակայքում, 2012-2017թթ.-ին Եական փոփոխություն է արձանագրել՝ **2012 թվականի 8.5-ի փոխարեն 2017 թվականին կազմել է ընդամենը 8:**

Չնայած դրան՝ դիտարկված ժամանակահատվածի ընթացքում գնահատված վերափոխումների ընդհանրական համաթիվը կտրուկ նվազել է 2016-2017թթ.-ին՝ 0.5 վարկանիշային միավորով:

Արդյունքում ընդամենը **0.3 միավորով համաթվի բարելավումը** հիմնականում պայմանավորվել է նշված ժամանակահատվածում Կանադայում բնապահպանության արդյունավետության (EPI), սոցիալական առաջընթացի (SPI) և համաշխարհային ձեռներեցության (GEI) ոլորտներում տեղի ունեցած բարեփոխումներով, որն ամբողջությամբ չեզոքացրել է մարդկային զարգացման (HCI) և ժողովրդավարության (DI) ոլորտի բացասական զարգացումները (տե՛ս աղյուսակ 3.):

<b>Աղյուսակ 3.</b> <b>Կանադայի համաթվի փոփոխությանը նպաստող ենթահամաթվերը 2012-2017 ժամանակահատվածում</b>																			
SPI	EPI	GEI	GGGI	Basel	FSI	HDI	CPI	GTCI	FOTF	LPI_L	LPI	GCI	GPI	EF	DB	GII	TTCI	HCI	DI
0,32	0,26	0,2	0,08	0,05	0,03	0,03	0,02	0	0,01	0	0	-0,01	-0,02	-0,02	-0,03	-0,05	-0,07	-0,14	-0,38

Համապատասխանաբար, համաթվի փոփոխության պատճառով Կանադան դիտարկված 66 երկրների կազմում 2 տեղով հետընթաց է արձանագրել՝ 2012թ.-ի 8-րդ տեղի փոխարեն 2017թ.-ին զբաղեցնելով 10-րդ տեղը (տե՛ս աղյուսակ 4.):

<b>Աղյուսակ 4.</b> <b>Կանադա: Համաթվի դինամիկան ըստ տարիների</b>		
Տարիներ	Երկրի տեղը 66 երկրների շարքում	Վարկանիշային միավորը (0-10)
2012	8	8,5
2013	8	8,7
2014	6	9,1
2015	5	9,2
2016	5	9,3
2017	10	8,8

**Իսպանիա (1-ին կլաստեր):** Իսպանիայի տնտեսության համար գնահատված Նոր համաթիվը, որը տատանվում է 0-10 միջակայքում, 2012-2017թթ.-ին էական փոփոխություն է արձանագրել՝ **2012 թվականի 6,6-ի փոխարեն 2017 թվականին կազմելով ընդամենը 7.6** (տե՛ս աղյուսակ 5.): Դիտարկված ժամանակահատվածի ընթացքում գնահատված վերափոխումների ընդհանրական համաթիվը դրսևորել է աճի միտում:

<b>Աղյուսակ 5.</b> <b>Իսպանիա: Համաթվի դինամիկան ըստ տարիների</b>		
Տարիներ	Երկրի տեղը 66 երկրների շարքում	Վարկանիշային միավորը (0-10)
2012	17	6,6
2013	16	6,8
2014	16	7,1
2015	16	7,5
2016	16	7,6
2017	16	7,6

Արդյունքում ընդամենը **1 միավորով համաթվի բարելավումը** հիմնականում պայմանավորվել է նշված ժամանակահատվածում Իսպանիայում բնապահպանության արդյունավետության (EPI), սոցիալական առաջընթացի (SPI), փողերի վլացման և ահաբեկչության ֆինանսավորման (Basel AML) ոլորտներում տեղի ունեցած բարեփոխումներով, որն ամբողջությամբ չէզոքացրել է մարդկային զարգացման (HCI) և տնտեսական ազատության (EF) ոլորտի բացասական զարգացումները (տե՛ս աղյուսակ 6.):

Աղյուսակ 6. Իսպանիայի համաթվի փոփոխությանը նպաստող ենթահամաթվերը 2012-2017 ժամանակահատվածում																			
SPI	EPI	Basel	DB	GEI	CPI	GGGI	FSI	GTCI	HDI	GII	LPI	LPI_L	DI	GCI	GPI	TTCI	FOTP	EF	HCI
0,33	0,3	0,18	0,12	0,12	0,06	0,05	0,04	0	0,03	0,02	0,02	0,02	0	0	-0,01	-0,01	-0,03	-0,09	-0,16

Համապատասխանաբար, համաթվի փոփոխության պատճառով Իսպանիան դիտարկված 66 երկրների կազմում մեկ տեղով բարելավվել է իր դիրքը՝ 2012թ.-ի 17-րդ տեղի փոխարեն 2017թ.-ին զբաղեցնելով 16-րդ տեղը (տե՛ս աղյուսակ 5.):

**Ռումինիա (2-րդ կլաստեր):** Ռումինիայի տնտեսության համար գնահատված Նոր համաթիվը, որը տատանվում է 0-10 միջակայքում, 2012-2017թթ.-ի ընթացքում դինամիկորեն աճել է՝ 2012թ.-ի 4.6-ի փոխարեն 2017թ.-ին կազմելով 5.5 միավոր (տե՛ս աղյուսակ 7.):

Աղյուսակ 7. Ռումինիա: Համաթվի դինամիկան ըստ տարիների		
Տարիներ	Երկրի տեղը 66 երկրների շարքում	Վարկանիշային միավորը (0-10)
2012	31	4,6
2013	31	4,8
2014	31	4,8
2015	30	5,4
2016	30	5,6
2017	29	5,5

Արդյունքում՝ դիտարկված ժամանակահատվածի ընթացքում **համաթվի 0.9 միավորով աճը** հիմնականում պայմանավորվել է նշված ժամանակահատվածում Ռումինիայում բնապահպանության արդյունավետության (EPI), գործարար ակտիվության (DB) և համաշխարհային ձեռներեցության (GEI) ոլորտներում տեղի ունեցած բարեփոխումներով, որն ամբողջությամբ չէզոքացրել է մարդկային զարգացման (HCI) և շրջագայությունների ու զբոսաշրջության մրցունակության (TTCI) ոլորտի բացասական զարգացումները (տե՛ս աղյուսակ 8.):

Աղյուսակ 8. Ռումինիայի համաթվի փոփոխությանը նպաստող ենթահամաթվերը 2012-2017 ժամանակահատվածում																			
EPI	DB	GEI	GTCI	EF	LPI_L	FSI	GGGI	Basel	HDI	FOTP	GII	SPI	LPI	GPI	DI	CPI	GCI	TTCI	HCI
0,32	0,17	0,13	0,08	0,08	0,08	0,07	0,06	0,03	0	0,02	0,02	0,02	0,01	0,01	-0,01	-0,03	-0,04	-0,05	-0,15

Համապատասխանաբար, համաթվի էական բարելավման պատճառով Ռումինիան դիտարկված 66 երկրների կազմում երեք տեղով բարելավվել է իր

դիրքը՝ 2012թ.-ի 31-րդ տեղի փոխարեն 2017թ.-ին զբաղեցնելով 29-րդ տեղը (տե՛ս աղյուսակ 7.):

**Չիլի (2-րդ կլաստեր):** Չիլիի տնտեսության համար գնահատված Նոր համաթիվը, որը տատանվում է 0-10 միջակայքում, 2012-2017թթ.-ին Եական փոփոխություն չի արձանագրել՝ **2012 թվականի 6,1-ի փոխարեն 2017 թվականին կազմելով ընդամենը 6,2** (տե՛ս աղյուսակ 9.): Չնայած դրան՝ դիտարկված ժամանակահատվածի ընթացքում գնահատված վերափոխումների ընդհանրական համաթիվի դինամիկան ունեցել է բավական տատանումներ, մասնավորապես 2015թ.-ին արձանագրվել է Նույնիսկ 7,0 միավոր, սակայն դրանից հետո Նորից վարկանիշային միավորն անկում է ունեցել՝ վերադառնալով դիտարկված ժամանակահատվածի սկզբի արժեքին:

Աղյուսակ 9.		
Չիլի: Համաթիվի դինամիկան ըստ տարիների		
Տարիներ	Երկրի տեղը 66 երկրների շարքում	Վարկանիշային միավորը (0-10)
2012	20	6,1
2013	20	6,2
2014	19	6,6
2015	18	7,0
2016	19	6,8
2017	22	6,2

Արդյունքում ընդամենը **0.1 միավորով համաթիվ բարելավումը** հիմնականում պայմանավորվել է Նշված ժամանակահատվածում Չիլիում սոցիալական առաջընթացի (SPI) և համաշխարհային ձեռներեցության (GEI) ոլորտներում տեղի ունեցած բարեփոխումներով, որը ամբողջությամբ չեզոքացրել է մարդկային զարգացման (HDI) և ժողովրդավարության (DI) ոլորտի բացասական զարգացումները (տե՛ս աղյուսակ 10.):

Աղյուսակ 10.																			
Չիլիի համաթիվի փոփոխությանը նպաստող ենթահամաթիվերը 2012-2017 ժամանակահատվածում																			
SPI	GEI	EPI	GGGI	CPI	HDI	LPI	GTCI	FSI	FOTPI	LPI_L	GPI	GCI	DB	EF	Basel	TTCI	GII	HCI	DI
0,3	0,16	0,15	0,09	0,04	0,04	0,02	0,02	0,02	0	0,01	0,01	-0,01	-0,02	-0,03	-0,04	-0,05	-0,06	-0,14	-0,42

Համապատասխանաբար, համաթիվի ոչ Եական փոփոխության պատճառով Չիլին դիտարկված 66 երկրների կազմում երկու տեղով իջեցրել է իր դիրքը՝ 2012թ.-ի 20-րդ տեղի փոխարեն 2017թ.-ին զբաղեցնելով 22-րդ տեղը (տե՛ս աղյուսակ 9.):

**Հունգարիա (2-րդ կլաստեր):** Հունգարիայի տնտեսության համար գնահատված Նոր համաթիվը, որը տատանվում է 0-10 միջակայքում, 2012-2017թթ.-ի սկզբում և վերջում փոփոխություն չի արձանագրել (տե՛ս աղյուսակ 11.): Չնայած դրան՝ դիտարկված ժամանակահատվածի ընթացքում գնահատված վերափոխումների ընդհանրական համաթիվի դինամիկան ունեցել է բավական տատանումներ, մասնավորապես 2015թ.-ին արձանագրվել է Նույնիսկ 6,3 միավոր, սակայն դրանից հետո Նորից վարկանիշային միավորն անկում է ունեցել՝ վերադառնալով դիտարկված ժամանակահատվածի սկզբի արժեքին:

Աղյուսակ 11. Հունգարիա: Համաթվի դինամիկան ըստ տարիների		
Տարիներ	Երկրի տեղը 66 երկրների շարքում	Վարկանիշային միավորը (0-10)
2012	22	5,8
2013	23	5,8
2014	23	6,1
2015	22	6,3
2016	21	6,3
2017	24	5,8

Արդյունքում դիտարկված ժամանակահատվածի սկզբում և ավարտին համաթիվը փոփոխության չի ենթարկվել: Հիմնականում բնապահպանության արդյունավետության (EPI) և կոռուպցիայի ընկալման (CPI) ոլորտներում տեղի ունեցած բարեփոխումներն ամբողջությամբ չեզոքացրել են մարդկային զարգացման (HDI) և շրջագայությունների ու զբոսաշրջության մրցունակության (TTCI) ոլորտի բացասական զարգացումներով (տե՛ս *աղյուսակ 12*):

Աղյուսակ 12. Հունգարիայի համաթվի փոփոխությանը նպաստող ենթահամաթվերը 2012-2017 ժամանակահատվածում																			
EPI	CPI	DB	GEI	LPI	HDI	GTCI	SPI	LPI L	GGGI	GPI	EF	DI	FSI	GCI	Basel	FOTP	GII	TTCI	HCI
0,22	0,08	0,07	0,07	0,06	0,01	0,01	0	0	0	-0,01	-0,02	-0,02	-0,03	-0,04	-0,04	-0,06	-0,07	-0,08	-0,18

Համապատասխանաբար, համաթվի ոչ էական փոփոխության պատճառով Հունգարիան դիտարկված 66 երկրների կազմում երկու տեղով զիջել է դիրքը՝ 2012թ.-ի 22-րդ տեղի փոխարեն 2017թ.-ին զբաղեցնելով 24-րդ տեղը (տե՛ս *աղյուսակ 11*):

**Մոլդովա (3-րդ կլաստեր):** Մոլդովայի տնտեսության համար գնահատված նոր համաթիվը, որը տատանվում է 0-10 միջակայքում, 2012-2017թթ.-ին դինամիկորեն աճել է՝ **2012 թվականի 3.2-ի փոխարեն 2017 թվականին կազմելով 3.5** (տե՛ս *աղյուսակ 13*):

Աղյուսակ 13. Մոլդովա: Համաթվի դինամիկան ըստ տարիների		
Տարիներ	Երկրի տեղը 66 երկրների շարքում	Վարկանիշային միավորը (0-10)
2012	43	3,2
2013	43	3,4
2014	44	3,6
2015	40	4,0
2016	39	4,0
2017	48	3,5

Արդյունքում **0.3 միավորով համաթվի բարելավումը** հիմնականում պայմանավորվել է նշված ժամանակահատվածում Մոլդովայում գործարար ակտիվության (DB), բնապահպանության արդյունավետության (EPI), փողերի վլացման և ահաբեկչության ֆինանսավորման (Basel AML) ոլորտներում տեղի ունեցած



բարեփոխումներով, որը ամբողջությամբ չեզոքացրել է շրջագայությունների և զբոսաշրջության մրցունակության (TTCI) և մարդկային զարգացմամբ պայմանավորված (HDI) բացասական նպաստումները (տե'ս աղյուսակ 14.):

Մոլդովայի համաթվի փոփոխությանը նպաստող ենթահամաթվերը 2012-2017 ժամանակահատվածում																			
<i>Աղյուսակ 14.</i>																			
DB	EPI	Basel	EF	FSI	LPI	CPI	SPI	GTCI	LPI_L	GCI	GPI	GGGI	GEI	FOTP	DI	GII	HCI	HDI	TTCI
0,22	0,14	0,08	0,06	0,05	0,05	0,04	0,02	0,02	0	0	0	-0,01	-0,01	-0,01	-0,03	-0,03	-0,08	-0,09	-0,09

Թեև համաթվի վարկանիշային միավորն աճել է, սակայն Մոլդովայի դիրքը վերլուծության համար դիտարկված 66 երկրների կազմում հետընթաց է ապրել (տե'ս աղյուսակ 13.): Մասնավորապես, եթե 2012 թվականին Մոլդովան զբաղեցնում էր 43-րդ տեղը 66 երկրների շարքում, ապա **2017 թվականին զբաղեցրել է 48-րդ տեղը**, պայմանավորված իրականացրած բարեփոխումների համեմատաբար դանդաղ ընթացքով:

**Ղրղզստան (3-րդ կլաստեր):** Ղրղզստանի տնտեսության համար գնահատված Նոր համաթիվը, որը տատանվում է 0-10 միջակայքում, 2012-2017թթ.-ին դիսամիկորեն աճել է՝ **2012 թվականի 2.2-ի փոխարեն 2017 թվականին կազմելով 2.6** (տե'ս աղյուսակ 15.):

Աղյուսակ 15.		
Ղրղզստան: Համաթվի դինամիկան ըստ տարիների		
Տարիներ	Երկրի տեղը 66 երկրների շարքում	Վարկանիշային միավորը (0-10)
2012	56	2,2
2013	57	2,2
2014	58	2,0
2015	57	2,6
2016	55	2,8
2017	56	2,6

Արդյունքում **0.4 միավորով համաթվի բարելավումը** հիմնականում պայմանավորվել է նշված ժամանակահատվածում Ղրղզստանում բնապահպանության արդյունավետության (EPI) և համաշխարհային մրցունակության (GCI) ոլորտներում տեղի ունեցած բարեփոխումներով, որն ամբողջությամբ չեզոքացրել է մարդկային զարգացման (HCI) և շրջագայությունների և զբոսաշրջության մրցունակության (TTCI) ոլորտի բացասական զարգացումները (տե'ս աղյուսակ 16.):

Ղրղզստանի համաթվի փոփոխությանը նպաստող ենթահամաթվերը 2012-2017 ժամանակահատվածում																			
<i>Աղյուսակ 16.</i>																			
EPI	GCI	DB	LPI_L	FSI	GPI	SPI	HDI	DI	GII	GTCI	GEI	FOTP	EF	Basel	LPI	GGGI	CPI	TTCI	HCI
0,22	0,07	0,06	0,06	0,06	0,04	0,04	0,04	0,03	0	0,02	0,02	0,01	0,01	0,01	0	-0,03	-0,04	-0,08	-0,13

Թեև համաթվի վարկանիշային միավորն աճել է, սակայն Ղրղզստանի դիրքը վերլուծության համար դիտարկված 66 երկրների կազմում դիտարկվող 2012-2017թթ.-ի սկզբին ու ավարտին անփոփոխ է մնացել (տե՛ս աղյուսակ 15.)՝ **գբաղեցնելով 56-րդ տեղը:**

**Քենիա (4-րդ կլաստեր):** Քենիայի տնտեսության համար գնահատված նոր համաթիվը, որը տատանվում է 0-10 միջակայքում, 2012-2017թթ.-ին դինամիկորեն աճել է՝ **2012 թվականի 1.2-ի փոխարեն 2017 թվականին կազմելով 1.9** (տե՛ս աղյուսակ 17.):

Աղյուսակ 17. Քենիա: Համաթվի դինամիկան ըստ տարիների		
Տարիներ	Երկրի տեղը 66 երկրների շարքում	Վարկանիշային միավորը (0-10)
2012	63	1,2
2013	62	1,2
2014	62	1,4
2015	60	1,8
2016	59	2,1
2017	59	1,9

Արդյունքում **0.7 միավորով համաթվի բարելավումը** հիմնականում պայմանավորվել է նշված ժամանակահատվածում Քենիայում սոցիալական առաջընթացի (SPI), լոգիստիկայի արդյունավետության (LPI) և ահաբեկչության ֆինանսավորման (Basel AML) ուղղությամբ իրականացված բարեփոխումներով, որն ամբողջությամբ չեզոքացրել է տնտեսական ազատության (EF) և մամուլի ազատության (FOTP) հետընթացով պայմանավորված բացասական նպաստումները (տե՛ս աղյուսակ 18.):

Աղյուսակ 18. Քենիայի համաթվի փոփոխությանը նպաստող ենթահամաթվերը 2012-2017 ժամանակահատվածում																			
SPI	LPI	Basel	DB	EPI	LPI_L	HDI	GGGI	HCI	GEI	GII	DI	GCI	FSI	CPI	TTI	GTCI	GPI	FOTP	EF
0,21	0,14	0,13	0,1	0,07	0,06	0,05	0,04	0,04	0,03	0	0,03	0,02	0,02	-0,01	-0,02	-0,02	-0,02	-0,04	-0,06

Համապատասխանաբար, համաթվի կտրուկ աճին զուգընթաց բարելավվել է Նաև Քենիայի դիրքը վերլուծության համար դիտարկված 66 երկրների կազմում (տե՛ս աղյուսակ 17.): Սամնավորապես, եթե 2012 թվականին Քենիան գբաղեցնում էր 63-րդ տեղը 66 երկրների շարքում, ապա 2017 թվականին մի շարք ոլորտներում իրականացրած մասշտաբային բարեփոխումների շնորհիվ գրանցել է առաջընթաց՝ **գբաղեցնելով 59-րդ տեղը:**

**Պակիստան (4-րդ կլաստեր):** Պակիստանի տնտեսության համար գնահատված նոր համաթիվը, որը տատանվում է 0-10 միջակայքում, 2012-2017թթ.-ին նվազել է՝ **2012 թվականի 0.1-ի փոխարեն 2017 թվականին կազմելով 0** (տե՛ս աղյուսակ 19.):

Աղյուսակ 19. Պակիստան: Համաթվի դինամիկան ըստ տարիների		
Տարիներ	Երկրի տեղը 66 երկրների շարքում	Վարկանիշային միավորը (0-10)
2012	66	0,1
2013	66	0,1
2014	66	0,2
2015	66	0,2
2016	66	0,3
2017	66	0,0

Արդյունքում **0.1 միավորով համաթվի նվազումը** հիմնականում պայմանավորվել է նշված ժամանակահատվածում Պակիստանում մարդկային կապիտալի (HCI), շրջագայությունների, զբոսաշրջության մրցունակության (TTCI) որոշտում տեղի ունեցած բացասական զարգացումներով, որի արդյունքում ամբողջությամբ չէզոքացվել է բնապահպանության արդյունավետության (EPI), բարգավաճման (LP) և մարդկային զարգացման (HDI) համաթվերի բարելավմամբ պայմանավորված դրական զարգացումները (տե՛ս աղյուսակ 20.):

Աղյուսակ 20. Պակիստանի համաթվի փոփոխությանը նպաստող ենթահամաթվերը 2012-2017 ժամանակահատվածում																			
EPI	LPI/L	HDI	SPI	Basel	FSI	GTCI	GEI	GII	GGGI	GCI	FOTF	DB	DI	EF	LPI	CPI	GPI	TTCI	HCI
0,06	0,05	0,04	0,03	0,03	0,02	0,02	0,01	0,01	0	-0,01	-0,01	-0,02	-0,02	-0,03	-0,03	-0,04	-0,07	-0,07	-0,1

Թեև համաթվի վարկանիշային միավորը վատթարացել է, սակայն Պակիստանի դիրքը վերլուծության համար դիտարկված 66 երկրների կազմում անփոփոխ է մնացել (տե՛ս աղյուսակ 19.): Մասնավորապես, 2012-2017 թվականներին Պակիստանը զբաղեցնում է կայուն 66-րդ տեղը 66 երկրների շարքում:

**Կամբոջա (4-րդ կլաստեր):** Կամբոջայի տնտեսության համար գնահատված Նոր համաթիվը, որը տատանվում է 0-10 միջակայքում, 2012-2017թթ.-ին գրեթե անփոփոխ է մնացել՝ **2012 թվականի 1.2-ի փոխարեն 2017 թվականին կազմելով ընդամենը 1.3** (տե՛ս աղյուսակ 21.):

Աղյուսակ 21. Կամբոջա: Համաթվի դինամիկան ըստ տարիների		
Տարիներ	Երկրի տեղը 66 երկրների շարքում	Վարկանիշային միավորը (0-10)
2012	62	1,2
2013	63	1,2
2014	64	1,1
2015	64	1,2
2016	64	1,3
2017	63	1,3

Արդյունքում **0.1 միավորով համաթվի բարելավումը** հիմնականում պայմանավորվել է նշված ժամանակահատվածում Կամբոջայում ահաբեկչության ֆինանսավորման (Basel AML), գեներալին անհավասարության համաշխարհային համաթվի (GGGI) և գործարար ակտիվության (DB) բարելավմամբ, որը ամբողջությամբ չեզոքացրել է բնապահպանության արդյունավետության (EPI) և համաշխարհային ձեռներեցության (GEI) համաթվերի վատթարացմամբ պայմանավորված տվյալ ոլորտների բացասական զարգացումները (տե'ս աղյուսակ 22.):

<i>Աղյուսակ 22.</i>																			
<i>Կամբոջայի համաթվի փոփոխությանը նպաստող ենթահամաթվերը 2012-2017 ժամանակահատվածում</i>																			
<i>Basel</i>	<i>GGGI</i>	<i>DB</i>	<i>GII</i>	<i>HDI</i>	<i>GPI</i>	<i>EF</i>	<i>GCI</i>	<i>LPI</i>	<i>FSI</i>	<i>SPI</i>	<i>CPI</i>	<i>LPI_L</i>	<i>GTCI</i>	<i>HCI</i>	<i>FOTP</i>	<i>TTCI</i>	<i>DI</i>	<i>GEI</i>	<i>EPI</i>
0,09	0,08	0,06	0,05	0,05	0,04	0,03	0,03	0	0,02	0,02	0,01	0,01	-0,01	-0,04	-0,05	-0,07	-0,07	-0,09	-0,1

Թեև համաթվի վարկանիշային միավորը փոքր-ինչ բարելավվել է, սակայն Կամբոջայի դիրքը վերլուծության համար դիտարկված 66 երկրների կազմում հետընթաց է ապրել (տե'ս աղյուսակ 21.): Մասնավորապես, եթե 2012 թվականին Կամբոջան զբաղեցնում էր 62-րդ տեղը 66 երկրների շարքում, ապա **2017 թվականին զբաղեցրել է 63-րդ տեղը՝** պայմանավորված իրականացրած բարեփոխումների համեմատաբար դանդաղ ընթացքով:

*Այսպիսով, իրականացված վերլուծությունները վկայում են, որ վերլուծության ենթարկված երկրների իշխանությունները և հանրությունն իրենց երկրի վերափոխումների բազմաբնույթ ծրագրերը մշակելու և իրականացնելու ընթացքում գիտական հիմնավորվածության ու գործնական նշանակության տեսանկյունից պետք է առավել հետևողական լինեն և կարողանան բարձրացնել վերոնշյալ վերափոխումների (որոնք սահմանափակում են երկրի սոցիալ-տնտեսական վարգացումը) համեմատական արդյունավետությունը: Իսկ վարգացմանը նպաստող վերափոխումները առնվազն պետք է իրականացվեն ոչ պակաս աճի տեմպերով, քան իրականացվել են հաշվետու ժամանակահատվածում:*

## INTERGRAL ASSESSMENT OF VARIOUS REFORMS IMPLEMENTED IN COUNTRIES: FACTS AND ANALYSIS

**SAMSON DAVOYAN**

*Head of Master Program in the faculty of Economics and Management in YSU,  
Doctor of Economics, Professor*

**LUSYA GALOYAN**

*Associate Professor in the department of General Economics in ASUE GB,  
PhD, Associate Professor*

The purpose of the article is to create an integral index of reforms through 20 partial indexes based on the methodology that we suggest, to assess implemented various reforms in 66 countries for 2012-2017 and to analyze comparative efficiency.

In the article we represent the methodology of creation of the integral index of reforms and results with the principal component method, then we assess the input of each partial index in the change of the integral index of reforms. In the last stage we have grouped countries by the integral index of reforms with the help of cluster analysis. We have also make judgements about the assessments of each country in clusters based on the assessments and analysis.

Implemented analysis witnesses that the society and the authorities of countries that we analyze while developing and implementing various programs of reforms should be more aspiring and be able to increase the comparative efficiency of reforms that restrict social-economic development of countries. Reforms that foster development at least should be implemented with the pace not lower than those in reporting period.

**Keywords:** *reforms, principal component, panel data analysis, cluster analysis, comparative efficiency, index, input.*

## **ВСЕОБЩАЯ ОЦЕНКА РАЗНОРОДНЫХ ПРЕОБРАЗОВАНИЙ, ОСУЩЕСТВЛЕННЫХ СТРАНАМИ: ФАКТЫ И АНАЛИЗЫ**

**САМСОН ДАВОЯН**

*Руководитель магистерской программы на факультете экономики и  
управления Ереванского государственного университета,  
доктор экономических наук, профессор*

**ЛЮСЯ ГАЛОЯН**

*Доцент кафедры общей экономики Гюмрийского филиала  
Армянского государственного экономического университета,  
кандидат экономических наук, доцент*

Цель нашей статьи – сформировать всеобщий индекс преобразований при помощи двадцати частичных индексов на основе разработанной с нашей стороны методологии, с помощью которого произвести оценку и анализ сравнительной эффективности на уровне различных преобразований в 66 странах за 2012-2017гг.

В статье представлены, в соответствии с методом главного компонента, методология и результаты формирования всеобщего индекса преобразований, затем оценено способствование каждого отдельного частичного индекса изменению всеобщего индекса сформированных преобразований. На последнем этапе исследования с помощью инструментов кластерного анализа осуществлена группировка стран по всеобщему индексу преобразований. Чтобы сделать оценки и анализы более привлекательными, были интерпретированы оценки отдельных стран, включенных в кластер (зафиксированные максимальные, минимальные и средние значения в кластерной группе).

Осуществленный анализ показывает, что в процессе разработки и осуществления разнородных планов преобразований власти и общественность исследуемых стран должны быть более последовательными с точки зрения научной обоснованности и конструктивного значения, с тем чтобы могли повысить сравнительную эффективность вышеуказанных преобразований (которые ограничивают социально-экономическое развитие стран). А способствующие росту преобразования должны быть осуществлены не меньшими темпами роста, чем в период отчетности.

**Ключевые слова:** *преобразование, главный компонент, панельный анализ данных, кластерный анализ, сравнительная эффективность, индекс, способствование.*